Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-520[2]-27.02.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 404.1-ին հոդվածով.

«**Հոդված 404.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքը ստանալը**

1. Վճռաբեկ բողոքի քննության ընթացքում Վճռաբեկ դատարանը կարող է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (սույն հոդվածում այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով (սույն հոդվածում այսուհետ՝ ՄԻԵԿ) սահմանված իրավունքների և ազատությունների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ սկզբունքային հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով, եթե դա անհրաժեշտ է գործով որոշում կայացնելու համար:

2. Խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկություն կարող է ներկայացնել յուրաքանչյուր դատավոր, ինչի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում:

3. Խորհրդատվական կարծիք ստանալու դիմումը պետք է ներառի.

1) դիմումով բարձրացված հարցին (հարցերին) պատասխանելու համար էական նշանակություն ունեցող փաստակազմն ու իրավական հիմքերը,

2) դիմումով բարձրացված հարցին (հարցերին) պատասխանելու համար վերաբերելի ներպետական օրենսդրությունը,

3) ՄԻԵԿ վերաբերելի դրույթները, մասնավորապես, վերաբերելի կոնվենցիոնալ իրավունքները և ազատությունները,

4) հնարավորության դեպքում, և, եթե անհրաժեշտ է, դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ Վճռաբեկ դատարանի վերլուծություններն ու մեկնաբանությունները,

5) անհրաժեշտության դեպքում, դիմումն անհապաղ քննելու վերաբերյալ հիմնավորումներ,

6) անհրաժեշտության դեպքում, միջնորդություն՝ ապահովելու վարույթում ներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանց անանունությունը,

7) վերաբերելի լինելու դեպքում՝ դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ կողմերի փաստարկների ամփոփ շարադրանքը:

4. Դիմումին կարող են կցվել այն հիմնավորող անհրաժեշտ նյութեր:

5. Դիմումը պետք է համապատասխանի ՄԻԵԴ-ի կողմից սահմանված տեխնիկական պահանջներին:

6. ՄԻԵԴ-ի հետ փոխգործակցությունն ապահովում է գործով զեկուցող դատավորը, ով պատրաստում և ՄԻԵԴ է ներկայացնում դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ ՄԻԵԴ քարտուղարության կողմից հայցվող տեղեկությունը:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 404.1-ին հոդվածով.

«**Հոդված 404.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքը ստանալը**

1. Վճռաբեկ բողոքի քննության ընթացքում Վճռաբեկ դատարանը կարող է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (սույն հոդվածում այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով (սույն հոդվածում այսուհետ՝ ՄԻԵԿ) սահմանված իրավունքների և ազատությունների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ սկզբունքային հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով, եթե դա անհրաժեշտ է գործով որոշում կայացնելու համար:

2. Խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկություն կարող է ներկայացնել յուրաքանչյուր դատավոր, ինչի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում:

3. Խորհրդատվական կարծիք ստանալու դիմումը պետք է ներառի.

1) դիմումով բարձրացված հարցին (հարցերին) պատասխանելու համար էական նշանակություն ունեցող փաստակազմն ու իրավական հիմքերը,

2) դիմումով բարձրացված հարցին (հարցերին) պատասխանելու համար վերաբերելի ներպետական օրենսդրությունը,

3) ՄԻԵԿ վերաբերելի դրույթները, մասնավորապես, վերաբերելի կոնվենցիոնալ իրավունքները և ազատությունները,

4) հնարավորության դեպքում, և, եթե անհրաժեշտ է, դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ Վճռաբեկ դատարանի վերլուծություններն ու մեկնաբանությունները,

5) անհրաժեշտության դեպքում, դիմումն անհապաղ քննելու վերաբերյալ հիմնավորումներ,

6) անհրաժեշտության դեպքում, միջնորդություն՝ ապահովելու վարույթում ներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանց անանունությունը,

7) վերաբերելի լինելու դեպքում՝ դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ կողմերի փաստարկների ամփոփ շարադրանքը:

4. Դիմումին կարող են կցվել այն հիմնավորող անհրաժեշտ նյութեր:

5. Դիմումը պետք է համապատասխանի ՄԻԵԴ-ի կողմից սահմանված տեխնիկական պահանջներին:

6. ՄԻԵԴ-ի հետ փոխգործակցությունն ապահովում է գործով զեկուցող դատավորը, ով պատրաստում և ՄԻԵԴ է ներկայացնում դիմումով բարձրացված հարցի (հարցերի) վերաբերյալ ՄԻԵԴ քարտուղարության կողմից հայցվող տեղեկությունը:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը:

Հոդված 3~~2~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ (Կ-520-27.02.2023-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-520[1]-27.02.2023-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-520[2]-27.02.2023-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-520[3]-27.02.2023-ՊԻ-011/2) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ԱԺ պատգամավոր Արփի Դավոյան***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	«ԼՐԱՑՈՒՄ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ԱԺ պատգամավոր***	**«Հայաստանի Հանրապետության**	Օրենսգիրքը բառից հետո լրացնել «(այսուհետ՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

	Արփի Դավոյան	**քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Օրենսգիրք)» բառերով:		
3.	***ԱԺ պատգամավոր Արփի Դավոյան***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով. «**Հոդված 2.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը:»: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը սահմանում է, որ եզրափակիչ դատական ակտ է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը: Այս կետը ուժը կորցրած ճանաչելու առաջարկը հիմնավորվում է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նրանով, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող այս ակտն իր բնույթով եզրափակիչ դատական ակտ չէ: Բացի դա, վերոգրյալ ակտը, ըստ Օրենսգրքի, դասվում է եզրափակիչ դատական ակտերի թվին, իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ միայն միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում, ինչից հետևում է, որ եզրափակիչ դատական ակտերի դեմ բողոքներ ներկայացվելու դեպքում պետական տուրքը ենթակա է գանձման օրենքով սահմանված չափով, ուստի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացվելու դեպքում բողոք բերողի համար առաջանում է պետական տուրք վճարելու պարտականություն, ինչը		

			լրացուցիչ բեռ է հատկապես պարտապանի համար, ով սնանկ է ճանաչված, բայց վիճարկում է պահանջների ցուցակը: Խնդիր կարող է հարուցել նաև այն հարցը, թե պահանջների ցուցակը հաստատելու մասին դատական ակտի դեմ բողոք ներկայացնելիս անձն ինչ չափով պետք է վճարի պետական տուրքը: Այն դրամական բնույթի, թե ոչ դրամական բնույթի պահանջ է: Ընդհանուր առմամբ պահանջների վերջնական ցուցակով հաստատվում է որոշակի մեծության գումար ստանալու պարտատիրոջ իրավունքը, ուստի հնարավոր է հանգել հետևության, որ այն իր բնույթով դրամական պահանջ է, սակայն մյուս կողմից էլ այն կարելի է դիտել նաև ոչ դրամական բնույթի պահանջ և այդ ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար գանձել ոչ դրամական բնույթի		

			պահանջների համար սահմանված պետական տուրքը: Նշվածի հաշվառմամբ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը ճանաչել ուժը կորցրած:		
4.	***ԱԺ պատգամավոր Արփի Դավոյան***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Փոխել հոդվածի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է: